ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/43

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով Վահե Իսրայելյանի կողմից 17.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/43 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1.<u>Վահե Իսրայելյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Վահե Իսրայելյանը (այսուհետ նաև՝ Բողոքաբեր) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 17.03.2018թ. բողոքով հայտնել է, որ Վահե Իսրայելյանը 2017թ. մինչ օրս աշխատում է որպես գլխավոր հաշվապահ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ում: Բողոքաբերի աշխատանքային պարտականությունների մեջ է մտնում նաև ՍՊԸ-ի անունից պետական գնման մրցույթների հայտերի պատրաստումը:

Բողոքաբերը հայտնել է, որ աշխատանքային պարտականությունները կատարելիս՝ նախապատրաստել է «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը, որը ընկերությունը ներկայացրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի

ձեռքբերման նպատակով կազմակերպված հրատապ բաց մրցույթին մասնակցելու համար:

Սակայն մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ընկերության մասնակցության հայտը օրենսդրության պահանջների խախտմամբ մերժվել է հետևյալ հիմնավորմամբ.

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ բոլոր 9 մասնակիցների հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի սահմանված պայմաններին (պահանջներին): Հրավերով սահմանված պայմաններին չի համապատասխանում «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով. մասնավորապես ներկայացված բանկային երաշխիքները չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով և «Մասիսի Գարուն Կարի Ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտերը մերժվել են:

Բողոքաբերը նշել է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել նաև «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.02.2018թ. տրամադրված թիվ O.AB.100.11GB.ESC.2.758.18 բանկային երաշխիքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի,

պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Ինչպես արդեն նշվել է, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մերժվել է, քանզի ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Վերոհիշյալ ձևակերպումից հստակ պարզ է դառնում, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելիս, չի հիմնավորել հայտի մերժման մասին որոշումը, այսինքն հստակ չի նշել, թե Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքը ինչով չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կոնկրետ որ պահանջներին:

Արդյունքում, Բողոքաբերի կարծիքով, խախտվել է նշված օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները, ինչը հանգեցրել է իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքի խախտմանը: Վերոհիշյալի արդյունքում սահմանափակվել է նաև «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի վիճարկվող որոշումը արտադատական կամ դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը, քանզի Ընկերությունը միայն ենթադրությունների հիման վրա կարող է ներկայացնել առարկություններ նշված որոշման դեմ:

Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ըստ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ունեցած տեղեկատվության (տեղեկատվությունը ստացվել է բանավոր, ոչ պաշտոնական)՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված բանկային երաշխիքում նշվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, մինչդեռ ըստ գնահատող հանձնաժողովի՝ բանկային երաշիքում պետք է նշվեր «բաց մրցույթ», քանզի տվյալ մրցույթը հանդիսանում է ընդամենը բաց մրցույթ:

Բողոքաբերը նշել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով մրցույթի հրավերում՝ սկսած հրավերի տեքստի առաջին էջից հստակ նշված է ՝ հրատապ բաց մրցույթ (հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2018թ. հունվարի 11-ի թիվ 1 որոշմամբ կամ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ «ՀԱՆԴԵՐՁԱՆՔ» ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ» և այլն):

Ուստի նման ենթադրյալ և ոչ իրավաչափ հիմքով ընկերության հայտը մերժելիս՝ գնահատող հանձնաժողովը խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, քանզի ինչպես երևում է, հենց հրավերով է սահմանված, որ այն հանդիսանում է հրատապ բաց մրցույթ:

Եթե ընդունենք, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում մրցույթի հրավերի Հավելված 12-ով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևին, ապա այդ երկու փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է երկու հանգամանք.

ա) հավելված 12-ի վերևի անկյունում նշված է.

«Հավելված 12

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/24»* ծածկագրով բաց մրցույթի հրավերի:

«Բաց մրցույթ» և «Հրատապ բաց մրցույթ» հարցի կետ կապված Ընկերության դիրքորոշումը արդեն իսկ ներկայացվել է սույն բողոքի 2-րդ կետով:

բ) Ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքում 1-ին կետում որպես նպատակ նշված է՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «հանդերձանքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթին «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի մասնակցության հայտից բխող պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, իսկ Հրավերի 12-ր հավելվածով՝ բանկային երաշիքի օրինակելի ձևով 1-ին կետում որպես նպատակ նշված է՝ «կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում:»:

Այս կապակցությամբ Բողոքաբերը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 9-րդ ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը

սույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ պայմանագրի ապահովումը սույն օրենքով նախատեսված դեպքերում ընտրված մասնակցի կողմից պայմանագրով ստանձնվող պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

2. Պայմանագրի ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Մրցույթի հրավերի 4-րդ կետի 4.3-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, ապա հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Ընդ որում, եթե բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված

կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7-րդ բաժինը ամբողջությամբ նվիրված է հայտի ապահովման կարգավորմանը: Այսպես, հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 2,5,6,7,8,9,10,11,12-րդ չափաբաժինների մասով միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Հրավերի 10-րդ բաժինը նվիրված է պայմանագրի ապահովման կարգավորմանը: Հրավերի 10.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում: Նույն հրավերի 10.2.1-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ սույն ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է 70 մլն. ՀՀ դրամը, ապա պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000474» գանձապետական հաշվին:

Հրավերի 12-րդ հավելվածը նվիրված է մասնակցի կողմից ներկայացվող բանկային երաշխիքին, ընդ որում, վերոհիշյալ հավելվածի 1-ին կետի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ սույն երաշխիքը հանդիսանում է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում, այսինքն՝ պայմանագրի ապահովում, այլ ոչ թե հայտի ապահովում:

Այսիսով, ինչպես երևում է թվարկված օրենսդրական նորմերից և մրցույթի հրավերի համապատասխան դրույթներից, առանձնացվում են երկու տարբեր իրավաբանական կատեգորիաներ, այն է. «Հայտի ապահովում», որը մասնակցի կողմից ներկայացվում է մրցույթի առաջին փուլում հայտի հետ միասին, և «Պայմանագրի ապահովում», որը

ներկայացվում է մրցույթի արդյունքների ամփոփումից հետո՝ հաղթող մասնակցի կողմից վերջինիս հետ պայմանագիր կնքելիս:

Հայտի ապահովում ներկայացնելիս (թե վճարման պահանջագրի ձևով և թե բանկային երաշխիքի ձևով ներկայացնելիս) փաստաթղթում նշվում է՝ «հայտի պապահովում» և «մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովում»:

Պայմանագրի ապահովում ներկայացնելիս՝ բանկային երաշխիքում նշվում է «կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովում»:

Այսպիսով, հրավերի 12-րդ հավելվածով նախատեսված երաշխիքի օրինակելի ձևը վերաբերում է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովմանը, այլ ոչ թե հայտի ապահովմանը:

Ուստի գնահատող հանձնաժողովը չէր կարող «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած բանկային երաշիքը համեմատել Հրավերի 12-րդ հավելվածով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի հետ, քանզի հրավերի 12-ր կետով նախատեսված է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովման համար, այլ ոչ թե հայտի ապահովման համար, իսկ ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած բանկային երաշիքը հանդիսանում է հայտի ապահովում:

Միևնույն ժամանակ Վահե Իսրայելյանը հայնել է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.02.2018թ. թիվ O.AB.100.11GB.ESC.2.758.18 բանկային երաշխիքը հանդիսանում է պատշաճ ֆինանսական փաստաթուղթ, որը հիմք է հանդիսանում բանկի կողմից բենեֆիցարին պահանջված գումարը անհապաղ վճարելու համար:

Այսպիսով, Բողոքաբերը գտնում է, որ նման պայմաններում, անընդունելի է գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած չհիմնավորված որոշումը, համաձայն որի՝ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը՝ ներկայացված բանկային երաշխիքի ձևով, չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուսումնասիրելով վերոշարադրված փաստերն ու փաստական հանգամանքները՝ Բողոքաբերը գտնում է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բանկային երաշխիքը համապատասխանում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման:

Բողոքաբերը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետով կայացրած որոշումը «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով:

2. Պարտավորեցնել մրցույթի գնահատող հանձնաժողովին «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ի լրումն բողոքի Վահե Իսրայելյանը 30.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի բանկային երաշխիքի 1-ին կետում մրցույթի ծածկագիրը նշված է եղել հետևյալ կերպ՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» հրատապ բաց մրցույթ (այնինչ ըստ գնահատող հանձնաժողովի պետք էր նշվեր բաց մրցույթ):

Այլ կերպ ասած, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է, քանզի ըստ մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ վերջինիս կողմից ներկայացված հայտի ապահովման (ներկայացված բանկային երաշխիքի ձևով) 1-ին կետում նշված է եղել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» հրատապ բաց մրցույթ, այլ ոչ թե բաց մրցույթ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով մրցույթի հրավերով մրցույթը միաժամանակ հիշատակվում է և որպես բաց, և որպես հրատապ բաց:

Բողոքաբերը նշել է, որ մինչ այս մրցույթը, ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ «Կոստյումների և բաճկոնների ձեռքբերման» նպատակով հայտարարել էր «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԲՄԱՊՁԲ-7/17» ծածկագրով մրցույթ, որի հրավերում մրցույթը միաժամանակ անվանվել է և հրատապ բաց, և բաց:

Տվյալ մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն և որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 07.02.2018թ.-ին տրամադրված թիվ 640/08 բանկային երաշխիքը (կցվում է), որում ներկայացված հայտի ապահովման (ներկայացված բանկային երաշխիքի ձևով) 1-ին կետում նշված է եղել՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/17» հրատապ բաց մրցույթ, այլ ոչ թե բաց մրցույթ:

Վերջինիս կողմից ներկայացված բանկային երաշխիքը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ սույն թվականի մարտի 19-ին ՀՀ պաշտպանության նախարարության և «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ԲՄԱՊՁԲ-7/17-1,2» ծածկագրով պայմանագիր:

Փաստորեն նույն փաստական հանգամանքների պայմաններում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/17» ծածկագրով մրցույթի շրջանակներում «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի ներկայացրած բանկային երաշիքը ՀՀ ՊՆ-ի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխանող, իսկ մյուս դեպքում նույն իրավիճակում «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ բանկային երաշխիքը հրավերի պահանջներին չբավարարելու հիմքով:

Վահե Իսրայելյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 22.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 21.03.2018թ. թիվ ԴՎԱ/988 գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է, որ նմանատիպ խնդրի վերաբերյալ առկա է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 18.12.2017թ. թիվ 27-1/23587-17 պարզաբանումը ուղղված ՀՀ պաշտպանության նախարարությանը և Խորհրդին:

Պատվիրատուն անհրաժեշտ է համարել անդրադառնալ Վահե Իսրայելյանի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոք բերելու «իրավական շահագրգռվածություն» ունենալու և վերջինիս բողոքի հիման վրա Խորհրդի կողմից բողոքարկման վարույթ ընդունելու իրավաչափությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին կամ դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Վերոնշյալ իրավական նորմերի մեկնաբանությունը թույլ է տալիս փաստել, որ օրենքը, սահմանելով գնումների ընթացակարգը բողոքարկելու կարգը և բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը (ընդ որում՝ ելնելով իրավական որոշակիության իրավունքից թե արտադատական, թե դատական բողոքարկման գործընթացում բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը, պետք է նույնական լինի) հղում է կատարում ՀՀ քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար (...):

ՀՀ սահմանադրական դատարանը իր՝ 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում, անդրադառնալով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուրին վերապահված իրավական պաշտպանության մեխանիզմների մեկնաբանությանը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի սահմանադրականության հարցին ամրագրել է հետևյալը. «(...) անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն էէ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:»:

Հիմք ընդունելով 04.04.2008թ. ՍԴՈ-747 որոշման 7-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 07.09.2010թ. թիվ ՍԴՈ-906 որոշմամբ հետագայում արձանագրել է, որ ՀՀ օրենդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են: Միևնույն ժամանակ ՀՀ սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև այլ անձանց կողմից ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու հնարավորությանը (actio popularis)՝ որպես այդպիսի դեպք քննարկելով հասարակական կազմակերպությունների կամ այլ միավորումների կողմից կոլեկտիվ իրավունքների և օրինական շահերի դատական պաշտանության հարցերը՝ միաժամանակ նշելով, որ ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով դատարան դիմելու իրավունքը վերապահել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Այսպիսով՝ վերը շարադրվածի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Օրենքի 46-րդ հոդվածով ամրագրված պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին և դատական կարգով բողոքարկելու իրավունքը չի կարողմեկնաբանվել ավելի լայն, քան ՀՀ սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումների պահանջներն են՝ հաշվի առնելովնաև actio popularis սկզբունքի պահպանումը: Հետևաբար, ցանկացած պարագայում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները բողոքարկելու (այդ թվում՝ գնումների բողոքարկման խորհրդին) իրավունքը վերապահված է միայն շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել է, կամ որ նույնն է այդ իրավունքը կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ անձն ունի իրավական շահագրգռվածություն, իսկ ուրիշի խախտված իրավունքների պաշտպանության նկատառումներով բողոքարկման իրավունքը պետք է վերապահել միայն այն հասարակական կազմակերպություններին, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

Սակայն տվյալ դեպքում չի հիմնավորվում Վահե Վարդանի Իսրայելյանի շահագրգռվածությունը սույն գործում և անհասկանալի է՝ վերջինիս իր որ իրավունքների պաշտպանությամբ է հանդես գալիս:

Մինչդեռ, նշված հանգամանքի պարզումը վճռորոշ նշանակություն ունի Վահե Վարդանի Իսրայելյանի բողոքը քննության առնելու հարցի իրավաչափության տեսանկյունից, առավել ևս, որ վերջինս վիճարկել է գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման իրավաչափությունն այն դեպքում, երբ նա քննարկվող ընթացակարգին չի մասնակցել և դրա շրջանակներում հայտ չի ներկայացրել:

Կարևոր է նաև այն, որ 16.03.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ իր իրավունքների ենթադրյալ խախտման հարցով, սակայն 20.03.2018թ. Խորհրդի անդամ Է. Սարգսյանի նախագահությամբ կայացված նիստում հայտարարվել է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հետ է վերցրել բողոքը: Այսինքն կարելի է եզրակացնել, որ քննարկվող շահառուի իրավունքների խախտման հարցը այլևս գոյություն չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ Բողոքաբերի բողոքը կրում է ձևական բնույթ, անհիմն է և ենթակա չէ բավարարման:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 22.03.2018թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտն այն հիմնավորմամբ, որ ընկերության կողմից ներկայացված բանկային երաշխիքի մեջ ընթացակարգը նշվել է որպես հրատապ բաց, մինչդեռ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգը չի հանդիսանում հրատապ մրցույթ, այլ հանդիսանում է բաց մրցույթ:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի տեքստի մեջ որոշ հատվածներում նշվել է «հրատապ բաց մրցույթ» որոշ հատվածներում «բաց մրցույթ» բառերը:

3. Ընթացակարգի հրավերի 12-րդ հավելվածով նախատեսվել է երաշխիքի օրինակելի ձևը, և հավելվածի վրա նշվել է «Հավելված 12 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/24»* ծածկագրով բաց մրցույթի հրավերի»:

4. «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի տեքստի մեջ նշված է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ -7/24» ծածկագրով ***բաց մրցույթ:***

5. Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.02.2018թ. տրված թիվ O.AB.100.11CB.ESC.2.758.18 բանկային երաշխիքը, որում նշվել է, որ այն ներկայացվում է որպես «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ***հրատապ բաց մրցույթին*** «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետով կայացված որոշմամբ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության բանկային երաշխիքը չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով Վահե Իսրայելյանի 17.03.2018թ. բողոքը և ի լրումն բողոքի 30.03.2018թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 21.03.2018թ. թիվ ԴՎԱ/988 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի տեքստի մեջ որոշ հատվածներում նշվել է «հրատապ բաց մրցույթ», որոշ հատվածներում՝ «բաց մրցույթ» բառերը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով

ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: 1,3,4-րդ չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 2,5,6,7,8,9,10,11,12-րդ չափաբաժինների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 14.02.2018թ. տրված թիվ O.AB.100.11CB.ESC.2.758.18 բանկային երաշխիքը, որում նշվել է, որ այն ներկայացվում է որպես ***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» հրատապ բաց մրցույթին*** «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում:

Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 5 հավելվածով ներկայացված գնային առաջարկի մեջ նշված է, որ այն ներկայացվում է ***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթի*** շրջանակներում:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի մեջ առկա է անհամապատասխանություն և տարբեր հատվածներում տարբեր կերպ է նշվել ընթացակարգի ձևը, այնուամենայնիվ, հրավերի թե 5-րդ հավելված գնային առաջարկում, և թե երաշխիքի օրինակելի ձևը սահմանող 12-րդ հավելվածում նշվել է ***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթ:*** Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտի հավելված 5-ով ներկայացված գնային առաջարկի մեջ նշված է **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով բաց մրցույթ,** իսկ որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի մեջ նշված է **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-7/24» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:** Հետևաբար նման պայմաններում, Խորհուրդը գտնում է, որ առկա է անհամապատասխանություն նաև «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված, Կարգի 41-րդ կետի համաձայն

շտկման ոչ ենթակա փաստաթղթերի միջև. մասնավորապես՝ գնային առաջարկում նշված է բաց մրցույթ, իսկ հայտի ապահովման մեջ՝ հրատապ բաց մրցույթ:

Այս տեսանկյունից, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ ***եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:***

Տվյալ դեպքում Խորհուրդը գտնում է, որ «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ նույնիսկ հրավերի տեքստի մեջ առկա վրիպակների պայմաններում, այնուամենայնիվ Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի՝ տվյալ դեպքում գնային առաջարկի և հայտի ապահովման միջև նույնպես առկա է անհամապատասխանություն, որը Կարգի 41-րդ կետի համաձայն ենթակա չէ շտկման:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չէր կարող «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած բանկային երաշխիքը համեմատել հրավերի 12-րդ հավելվածով սահմանված բանկային երաշխիքի օրինակելի ձևի հետ, քանզի հրավերի 12-ր կետով նախատեսված է կնքված պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների կատարման ապահովման համար, այլ ոչ թե հայտի ապահովման համար, Խորհուրդը հայտնում է, որ տվյալ դեպքում նշված Հրավերի թիվ 12 հավելվածով նախատեսված երաշխիքը չի կարող դիտարկվել որպես բացառապես պայմանագրի ապահովում, քանի որ ՀՀ կառավարության 11.08.2011թ. «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1145-Ն որոշմամբ հաստատվել է ***Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի ընդհանուր օրինակելի ձևը***, այլ ոչ թե այն ներկայացնելու նպատակը, ուստի այն կարող է կիրառվել թե հայտի ապահովում և թե պայմանագրի ապահովում ներկայացնելիս:

Ընթացակարգի հրավերի 8-րդ կետի 8.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի

բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Վահե Իսրայելյանի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ մերժելով «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Վահե Իսրայելյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 17.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**